ՄԵԾԱՐ ՈՒՍՄՈՒՆՔ

Հատոր Ա.

ՀԱՅԱՏՊԱՏՈՒՄ

Դ. ՄՈՍԿՈՒԱ.

1850.

ՄԱՆԻ ՈՒՍՄՈՒՆՔ

Հատոր Ա.

ՀԱԼԻԱՏԳԱՏՈՒՄ

2004

C գրտ-ն 5946
1085-ԱԿ
ՄԹ 112.489

ՀԱՒԱՏԱՊԱՏՈՒՄ,

կամ

ՄԵՆԵՐ ՈՒՍՄՈՒՆՔ

Քրիստոնեական Հաւատոյ

Ի Սերայ Վարժապետէ

Գրիգորեան Օմիւռնացւոյ։

Մեկրյան Մուեր

Ի ՄՈՍԿՈՒԱ։
Ի տպագրատան Վլադիմիրայ Կոլէջ։
1850.

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи, до выпуска изъ Типографіи, представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Москва, Марта 1-го дня, 1850 года.

Цензоръ Иванъ Снегиревъ.

5362-42

Գոս. գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մ. Ա. Մասիսյան
անվան գրքատուն

(36151-66)

103-99

ԱՌ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՍ։

Զաղգ ազգ Հոգեկան վարժեց հա-
տառօք և ճայրափաղ՝ յուրոյն ուրոյն 'ե
ապահանրերը հապենիկ բաշխեցե՝ Ատանը
Ա-ոհուան պնոսին անուանելով։ յորոց և
պերիսոին առաջիկայոք (Հաստատարարանք
եմ և պՀրեսարարարարանք) առ 'ե պէտ
հարարաղարեց հանիանց և երբ՝ անճանօրեց
գերց բարբառոց, հմմ երկ ինչ գրել 'ե
լեզու աշխարհիկ, այլ յաշխարհիկ ամենայն՝
որ ամենեցուն առ հասարակ հասկանալ էին,
երբէ՝ Նախնի-անեցոց և Ղրեմեցոց,
երբէ՝ Ադարիանեցոց և Ղպարեցոց,
երբէ՝ Ալրարանեայց, երբէ՝ Հայարանեայց,

և էլնէ՛ որոց Տաճկաստանի հողմանց էն
էնահէնէ, կամ անդրադարձ առ մեզ եկաւորէ։

Այլ զի ասէր ո՛չ միայն է՛ պարտաղ
կամ յաճ խօսեց յերկարութիւնդ Արեստաղ-
նէայց՝ ի պարտաճառս զարդ կամ սահմա՝ օ-
գտարարի ցայնոցն խառնուրդեան գրքերն յե-
ղանէ՛ւրան, զ՛ոն եղել ես՝ որչափ՝ ի կարի
էր ըստ հանգամանաց ժամանակին Հերեցոյ՝
պարզ և յոգարկ հայերենագիր յայնոցն՝ ի
բանս լինել՝ ի բաց զկարգաւորութենանն վար-
ուելովն։ Այ՝ առ այս՝ հանանաց ոմանց պէտ
եղեն պահպանութեան, որք են

ա. Ա՛ն՝ ի գործ ածել ամենայն ըզ
բառս յօգտակար լեզուաց եկամտելոյ, որպիսի
են՝ Բուրգա (քաղաց), Հաղ (գեր, պա-
տարագ), Հաղաղ (հեր՝ անդ՝ երբեմն նուա-
զելոյ՝ ի գերութենէ, նեղութ), սքուփու-

թիւն (ձլապուրիւն), տրուստ (ուղիղ, ճշմարիտ), տրստել (ուղղել), սուտիլթ անել (գողել), փօտսուլթ անել (արիւնել ընդ գողանալ), ապէժալթ անել (ղրկել), պղաւել (գոչել), մուլապ տալ (ողորել), վարավուրտ անել (գերեալ նկարել), սահմանսաղ (ժամանակը), քասիպուլթիւն կամ քէսիպուլթիւն (գնանկութիւն, չգտնուելիութիւն), սօվտաքարուլթիւն (վաճառականութիւն), պէտամաղ լինիլ (դժուարել, նեղել), նամաղուլ անել (գրաստարար եմ անհեն խօսել), վուազել (ղրոպել), ապուլ տալ (ընոյլ գալ, ընդունուլ, արձակել), թապլել ('ե էաց յգել, ընկենուլ), հարայ տալ (աղաղակ եմ ճել էանալ), կալաձի (խօսք, խօսակցութիւն, զրոյց),

խուճուռ (պարմանալէ), խուտուր (ոգա-
ռակ), ղրաղ (էղբ, ծայր), կուման
(կողմն), խի՛ր, եաղրիզ (ընդէնր, վանն էր),
ինմալ (ոբպէս), այս թաւուր՝ այդ
թաւուր (այսպէսն՝ այդպէսն), պէտապուր
(անասօր, խայտառակ), պէզարաճ (չանչ-
ռայնաւ), ճիկը (էարկո-ընե՛ն), ճկլուիլ
(էարկանալ), տիրուանք (ամէնէէն):

Ե. Այսրեալ պրարմատաբ յօդոբ կամ
պմանեկոբ կը՝ կամ կ՝ ՝ե ուկեպէն էայեց
՝ե նէրբկայ ժամանակս Սահմանական եղանա-
կէ, որպէս՝ ՝ե՛կ պկոր՝ ՝ե յանգս՝ Բան-
պի այբ չայնոբ անհամբ և անապէտ բոբ
ամենայնի՝ ՝ե՛կ դիայն կրան պրեց ենն պօրռ-
ընե՛ն եմաոբեց կամ պառ-ա-ելո-ընե՛ն, այլ
և ժանրպլուր և խժկան պէնան գոր-
ծեն՝ կորռ-ոանելով դիանգամայն պշմեպա-

հանն (*) հուէնցելոյ էարբաառոյս մերոյ պէնէկ տաղցու�։ ուրպէս էրէկ ոտ թոխանակ «Վտրեմ; ուտեմ» ասելոյ, «Վը կտրեմ; կուտեմ» ասելդ։ Համ անհամագոյն է՝ «Վը կտրեմ կոր, կուտեմ կոր»։

Գ։ Ի՞նչ էայ չգէլ պյանգոտ ում է ամ։ յորոյ պատաղչէնն (հանդէրձ էակէն էայլ։ էմ) ուվ՞ր էն ոմանտ էղել գրէրէ յամէնայն էայս (**), ՝է նէրէկայ է յանցել անէպտար ժամանակս։ է պէրէկրարդն՝ յանցեալ հապարքեալ ժամանակս։ Որով՝ թոխա-

(*) Վ՝արդան մեծն ՝է մէկն։ ցանդ։ (ժա։ 7)։

(**) Ի՞նմ՝ յայնս՝ որոյ լծորդութիւն է՝ Համ եմ, Համ իմ, Համ ամ։ ուրպէս շինեմ, ծնանիմ, հաւատամ։

նակ ասելոյ «Լցրեցամ, գնամ, սիրե, ատե · խօսեցը, պատմեցը· քարկա՝ նայը, կռուեցը» ասէն «Լցրեցում եմ, գնում եմ, սիրում է, ատում է· խօսում էիր, պատմում էիր, քար՝ կանում էր, կռուում էր·» և գոկա՝ նակ ասելոյ «Լցկի կամ եկայ, նստայ, կերայ, խմեցի, գրեցի, ասացի, լսեցի», ասէն «եկամ, նստամ, կե՝ րամ, խմամ, գրամ, ասամ, լսամ», կամ «եկեցիմ, նստեցիմ, կերեցիմ, խմեցիմ, գրեցիմ, ասեցիմ, լսեցիմ»։ Ամ՝ ղվեցելինք ղայք 'ե էեր ասնուն յե՝ ղանակ, բայց յօպարանալոյ յեանկան կանա՝ նայ լեղուն՝ ուրեմ եբեմ և ղեմասպան ղեմրեն · ղե գոկանակ ասելոյ ուղղու՝ ելամբ «Վարդացի» ասէն «կարդացիմ

համ կարդամ։» յորոց առաջինն պէտ՛ է
քան հայմանութիւնն, և երկրորդն՝ ոչ՞ւ քան
նշանակութիւնն, որպէս յայտնի եւ է։

Դ։ Ընդհանրական հոլովն ուստ վերջ-
նաւորութիւնքն՝ ո՛չ յաճախ և ո՛չ անկարելի
՝ի հին առնուլ, այլ՝ գո՛ւն ուրեւ, և յա՛յն
բառս մեայն՝ որովք վերայն ինչ համ ղրեղեր
երեւ համ պահանաւոր ժամանակ նշանա-
հել համ եղեն, որպիսի են սոքին «Ղնա-
պատումն, դաշտումն, քաղաքումն,
պալատումն, պարտիզումն, խցումն,
սեղանումն, ամնումն, շաբաթումն»։
Ամենայնիւ ո՛չ օրարք ինչ է այս ՝ի նախնեացն
մերոյ առվորութենէ (քան որոմ գնասանի
ուրեւ ուրեւ ՝ի մասնէանս նոցա գործածու-
թենէն այսպիսի հոլովոյ), սակայն և այն-
պէս բարձ՛մ քնամոտ բացատութենէն պէ՛տ

էն յայսմ կանոնէ։ Վասնզի խօսքն և անհամ է ասել «Տնումն, սրտումն, աչքումն, մտքումն, պատերազմումն, դըժոխքումն, արքայութիւնումն»։ Այլ վասն այսորիկ լաւ վարկայ էս զքոյին և զքոյնպէսն վարել 'ի սէրաւոր հոլովն՝ հանդերձ նախադրութիւնքն մէջ՝ որ պնդագոյնքն էին ընդանակութիւն. զոր օրինակ. «Տան մէջ, սրտի մէջ, աչաց կամ աչքերի մէջ, մտաց մէջ, դժոխոց մէջ, արքայութեան մէջ»։

Զորեւէն այս կանոնաւ՝ զոր պահել կարիս որ համարեցայ, ոչ դեպն դժուարանալի չառնէն զքանն, այլ՝ տասամբ եւ եւ չեռնասու և լինէն աշակերտաց՝ առ եղբարս 'ի բա՛ն անդր մերձենալ նախանձանէն մերոյ գեղեցիկ Հայախօսութեան. զորոյ

թա՛ջ և ու տուցէն նոյնա պնծալով՝ յորժամ Վրէրմէանամէան հանանոցն՝ այլ և Հրէաս բամէանէն՝ հմպանայցէն լեռվ։

Ա՛մբոլ էր ու փեղեաւ մանրմասուղէ էան ՝է մեջ ուռնուլ պայլոց և հանգամանաց համ պայլայլանուն պէսպէսութիւնէ աշխարհին լեզուէն մերոյ՝ բոպ գաւառաց գաւառաց, և ի պիտոյն ի պիտրպպա հնչմանց Հայկէան պառեցս՝ պրբոց վեճ ճանը է ու ոմանս ՝է մերոց դնուսերոց։ Այլ այդ ամենայն այլա՛ն ընդոյն պարեմ։ պի ու ճամ չափաւորութիւն բանի քնամ պանել արժան է։

Ի հարարրած հոյս Վրէրապանէական Ասմանց՝ յաւելի ի դաղաւածոյս ՝է Դաբրանական պաղաչափութիւնանց Շ՝ նորմալ հայրապետին մերոյ Գրիգորի Կայսերոյ

(որպէսզի՝ 'ի վերնայն Աստուածաբանութեան Պատ-
մութեանն՝ 'ի հինգերորդ վերադրութեանց
Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի) քան-
զարգել այնոքիսիսն։ որպէս զի մանկունս
յեր վարժելոյ 'ի նախակրթեալ ուսմունս,
ուսցին և պայծառանալ ասել 'ի բերան։ Լուսի
զիմաստսն բացայայտել աշխարհին լեզուաւ՝
ուսուցանողին լեցեալ գրծ։

Կա՛ն 'ի պարբասարի և այլ 'ի Ար-
նուանոյ Ասմանոյ, այս է՝ Հնոյ Կապարտ-
ռանին, և և Եկեղեցական Պատմու-
թեանցն հմատուութենէ՝ ո՛չ յաշխարհին՝
այլ 'ի գրոց բարբառ, յառանցին առանցին
'ի թուրքի պարարակ ամենեալ։ զոր և
հեր զնեալ պատգարութեամբ 'ի լոյս ընծայեցեալ
առ 'ի պէտս ամենասիրելի մանկանց Աղգին մերոյ։

Թո՛ղլ տուք մանկտւոյդ գալ առ ի՛ս,
և մի՛ արգելուք զդոսա. զի այդպի՛սեացդէ արքայութի՛ն Աստ (Ղուկ. ԺԸ. 16)։

Մանունց Ուսմանց որ աստըս գոն՝
Մե՛տ դիր, մանուկ, լե՛ր և ըզգոն.
Սիրոյ ամմամբ և Հաւատոյ՝
Տեառն Աստուծոյ պաշտօն մատո։
Երկեղած միտք 'ի քեզ թէ կայ,
Զոր ուսանիսդ՝ անդուլ խոկա։
Բաբունապետն հանուրց Յիսուս
Զմանկտին օրհնեալ ըզդեւաբոյս,
«Ասպիսեանց է, ասէ, արժան
Յերկնից հանգչել 'ի յոթեան»։
Յուսափսփանգ փուլթա և դու
Ակցորդ նոցուն լինել պարու։
Լ՝ քեզ արդ ժամ անմեղ աւուրբ
Հրեշտականալ 'ի վարս 'ի սուրբ։

«Դաղումն են մեզ բանք, և դժուա-
րապատում 'ի մեկնել.... Պիտոյ է
ձեզ ուսանել՝ թէ զինչ են Նշանա-
գիրք սկզբան (Անոր Ուսմունք կամ
Համառօտ Դիտելիք) բանիցն Աստու-
ծոյ. և եղերուք կարօտ կաթին, և
ոչ հաստատուն կերակրոյ։ Զի ամե-
նայն որ կաթնկեր է, տգէտ է բանին
արդարութեան. քանզի տղայ է։ Այլ
կատարելոցն է հաստատուն կերակուր.
որոց՝ վասն 'ի չափն հասանելոյ՝
Ճաշակելիքն կիրթ են ընտրութեան
բարւոյ և չարի»։

Եբր. Է. 11—14։

ՀԱՒԱՏԱՊԱՏՈՒՄ,

կամ

Մանր Ուսմունք

Քրիստոնէական Հաւատոյ։

Հ. Հաւատով ինչ ես դու։
Պ. Քրիստոնեայ։
Հ. Ի՞նչ նշանակէ «Քրիստոնեայ» բառդ։
Պ. «Քրիստոսի հետևող կամ հաւատացող» (*)։

(*) Ի՞նչ Քրիստոնէայ անուանը՝ Դեռ Անտիոք քաղաքումը Աստուածալի գրէն հաւատացեալներն Քրիստոսի (Գործ. ԺԱ. 26)։

Հ. Քրիստոնէական վարդապետու-
թիւնն զինչ ուսուցանէ։
Պ. ԶՄ.ծպաշտութիւն։
Հ. ԶՄ.ստուած ինչպէս պարտ է պաշ-
տել։
Պ. Հշմարիտ Հաւատով, հաստա-
տուն Յուսով, և անկեղծ Սիրով։

ԳԼ. Ա.

ՀԱՒԱՏՔ։

Հ. Քրիստոնէական Հաւատալիքն
յոր գրուածոյ մէջ պարունակեալ
են համառօտիւ։
Պ. Հանգանակի մէջ։
Հ. Հանգանակն որն է։
Պ. Հաւատաքն է։
Հ. Գիտես 'ի բերան։

Պ. Գիտեմ։

Հ. Ասա։

Պ. «Հաւատամք 'ի մի Աստուած՝ Հայր ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութեց։

«Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս յորդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր։ Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ և ոչ արարած։ Նոյն էնքն 'ի բնութենէ Հօր։ որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք։

«Որ յաղագս մեր մարդկան՝ և վասն մերոյ փրկութեան, իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն սրբովն։ Որով հաւ

մարմին, հոգի և միտք, և զամենայն որ ինչ է 'ի մարդ, Ճշմարտապէս՝ և ոչ կարծեօք։

«Զարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ՝ յերրորդ աւուր յարուցեալ։ Եկեալ յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր։

«Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, դատել զկենդանիս և զմեռեալս։ Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

«Հաւատամք և 'ի սուրբ Հոգին յանեղն և 'ի կատարեալն։ Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն. և բնակեցաւ 'ի սուրբսն։

«Հաւատամք և 'ի մի միայն՝ ընդհանրական և առաքելական եկեղեցի։ 'Ի մի մկրտութիւն։ Յապաշխարութիւն։ 'Ի քաւութիւն և 'ի թողու-

թիւն մեղաց։ 'Ի յարութիւն մե-
ռելոց, 'ի դատաստանն յաւիտենից
հոգւոց և մարմնոց. յարքայութիւնն
երկնից, և 'ի կեանն յաւիտենականս։»

*
* *

Իսկ որք ասեն, էր երբեմն՝ յոր-
ժամ ոչ էր Որդի, կամ էր եր-
բեմն՝ յորժամ ոչ էր սուրբ Հոգին,
կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ
էութենէ ասեն լինել զՈրդին Աս-
տուծոյ և կամ զսուրբ Հոգին։ Այս-
թէ փոփոխելի են, կամ այլայլելի,
զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և
առաքելական եկեղեցի։

*
* *

«Իսկ մեք փառաւորեսցուք որ յա-
ւաջ քան զյաւիտեանս, երկիրպա-

գանելով սրբոյ Երրորդութեանն՝ և միոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

* * *

Հ. Աւդ Հանգանակդ յոր տեղ սահմանեցաւ։

Պ. Նիկիոյ ժողովոյն մէջ։

Հ. Ոյք ժողովեցան 'ի Նիկիա։

Պ. Երեք հարիւր տասն և ութ Հայրապետք։

Հ. Ինչ պատճառաւ ժողովեցան նոքա։

Պ. Զ Արիոս հերետիկոսը դատապարտելոյ համար։

Հ. Արիոսի հերետիկոսութիւնն ինչ էր։

Պ. Նա ասէր՝ թէ Հայր Աստուած

մեծ է քան զՈրդի, ևս թէ՝ Որդին արարած է։

Հ. Օ՞հանգանակը ո՞վ բերաւ 'ի Հայաստան։

Պ. Արիստակէս Հայրապետն։

Հ. Ո՞վ էր Արիստակէս Հայրապետն։

Պ. Գրիգոր Լուսաւորչի փոքր որդին էր։

Հ. «Լոկ մեք փառաւորեսցուքը» ո՞վ ասաց։

Պ. Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ։

Հ. Վանի՞ գլխաւոր Հաւատալիք կան այդ հանգանակի մէջ։

Պ. Լոնն՝

ա. Գոյութիւն և միութիւն Աստուծոյ։

բ. Երրորդութիւն Աստուածային անձանց։

գ. Արարչագործութիւն Աստուծոյ և Սախսխնամութիւն։

Դ. ԱրմնաւուԹիւն Ս. Ծորդ-
ւոյն։
Ե. Սիւսանգամ գալուստնորա։
Զ. Լոյսն Հոգւոյն սրբոյ 'ի
Յորդանան։
Է. Ելկեղեցի Քրիստոսի, և
խորհուրդք նորա։
Ը. ՅարուԹիւն մեռելոց։
Թ. Վերջին դատաստան։

ԺԱ. Գոյա-ԸԷՆ և Սէռ-ԸԷՆ
Ա.ՊՊԱ-ԾՈՅ։

Հ. «ԳոյուԹիւն և ՍէռուԹիւն Ա.ռ-
տուծոյ» ասելովՔ զինչ իմանաս։
Պ. Իմանամ՝ ԹԷ Ա.ստուած կայ
և մի է։
Հ. Ա.ստուած ոչՔ է։

Պ. Երկնի և երկրի ստեղծողն և կառավարողն է։

Հ. Երկնի և երկրի ստեղծողն մարդ է, հրեշտակ է։

Պ. Ոչ մարդ է, և ոչ հրեշտակ։

Հ. Ապա ինչ է։

Պ. ԶԱստուծոյ զինչութիւնը ոչ մարդ կարող է իմանալ, և ոչ հրեշտակ։

Հ. Աստուած ոչը է։

Պ. Օ՞ր ութեամբ յամենայն տեղիս է, բայց էութեամբ անպարագրելի է։

Հ. Ուստի գիտես՝ թէ Աստուած կայ։

Պ. Արարածոց վերայ նայելով, և զԱ՛ճաշունչ գիրքը կարդալով։

Հ. Օ՞ինչ նշանակէ Արարած բառդ։

Պ. «Ստեղծուած, այսինքն՝ յայլմէ (յուրիշէ) եղած»։

Հ. Որ բանն ասի արարած։

Պ. Բաց յԱստուծոյ՝ ամենայն ինչ արարած է։

Հ. Որն է Աստուածաշունչ գիրքն։

Պ. Հին և նոր Կտակարանն է։

Հ. Ինչ պատճառաւ կոչի Աստուածաշունչ։

Պ. Այն պատճառաւ՝ որ Աստուծոյ ընչով (այսինքն՝ ազդեցութեամբ) գրեցաւ, և ոչ մարդկային ուսմամբ։

Հ. Ոյք գրեցին զՀին Կտակարանը։

Պ. Մարգարէք։

Հ. Ո՞նորը։

Պ. Առաքեալք։

Հ. Աստուծոյ անունն ինչ է։

Պ. «Որ Է»։

Հ. Ուստի գիտես։

Պ. Աստուած ինքն Մովսէս մար-

դարձեալ յայտնեց՝ ասելով. «Այս եմ Աստուած Որ Է» (*)։

Հ. Օ՞ր ինչ նշանակէ այդ անունդ։

Պ. Նշանակէ. «Այս եմ Ինքնադոյ, անփոփոխ, անսկիզբն, անվախճան»։

Հ. Աբրայեցւոց լեզուաւ որպէս ասի այդ անունդ։

Պ. «Եհովահ»։

Հ. Ուրիշ անուն ևս կարելի՞ է տալ Աստուծոյ։

Պ. Կարելի՛ է. զոր օրինակ Տէր, Ամենակալ, և այլն։

(*) Ելք. Գ. 14։

Բ. Երրորդութեան Աստուածային անէանոյ։

Հ. Աստուածային անձինք քանի՞ են։
Պ. Երեք։
Հ. Ասա զնոցա անուանքը։
Պ. Հայր · Որդի · Հոգի սուրբ։
Հ. Աստուածային անձինք զանազանին 'ի միմեանց։
Պ. Այո՛, զանազանին անձնաւորու-թեամբ։
Հ. Ինչպէս։
Պ. Այլ է Հօր անձն, այլ է Որդւոյ անձն, և այլ է Հոգւոյն սրբոյ անձն։
Հ. Ինչ-ուրեմն ևս զանազանին։
Պ. Այլ · զի են համաբուն, համազոյ, համակամ, համազօր, և համափառ։

Գ. Ամենակարողութիւն Աստուծոյ և Ամենակալութիւն։

Հ. «Ամենակարողութիւն» ասելով զի՞նչ իմանաս։

Պ. Իմանամ՝ թէ Աստուած յոչնչէ ստեղծեց զերկինքը և զերկիրը, և ինչ որ կայ նոցա մէջ։

Հ. «Ամենակալութիւն» ասելով՝ զի՞նչ իմանաս։

Պ. Իմանամ՝ թէ Աստուած զիւր ամենայն ստեղծուածքը իւր խնամովքն պահպանեալ է և պահպանէ։

Դ. Արքունութիւն Աստուածորդւոյն։

Հ. Աստուածային անձանց որն մարմին առաւ։

Պ. Երկրորդ անձն, որ է Որդին։

Հ. Յումմի առաւ մարմին։
Պ. Ի սուրբ կուսէն Մարիամայ։
Հ. Ինչ ասել է «Մարմին առաւ»։
Պ. «Մեզ նման մարդ եղև» ասել է։
Հ. Որդին Աստուծոյ մարմին առնելն յետոյ զինչ կոչեցաւ։
Պ. Յիսուս, Քրիստոս, Մեսսիայ, և Էմմանուէլ։
Հ. Մարմին չառած զինչ կոչէր։
Պ. Բան, Միածին, Որդի, և այլն։
Հ. Էմմանուէլ զինչ թարգմանի։
Պ. «Ընդ մեզ Աստուած»։
Հ. Որ ազգի բառ է։
Պ. Եբրայեցւոց։
Հ. Քրիստոս կամ Մեսսիայ զինչ նշանակեն։
Պ. «Օծեալ»։
Հ. Որ լեզուաց բառք են։
Պ. Քրիստոս՝ Յունաց բառ է, Մեսսիայ՝ Եբրայեցւոց։

Հ. Ինչ պատճառաւ կոչի Օծեալ։

Պ. Այն պատճառաւ՝ որ նա օծեալ էր ի Հոգւոյն սրբոյ Քահանայապետ Ճշմարիտ, Թագաւոր յաւիտենական, և Մարգարէ ի վերջ քան զամենայն մարգարէս։

Հ. Ուստի յայտնի է՝ թէ նա օծեալ էր ի Հոգւոյն սրբոյ։

Պ. Քրիստոս ինքն ասաց. «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս» (*)։

Հ. Զինչ նշանակէ Յիսուս, և որ ազգի բառ է։

Պ. Նշանակէ Փրկիչ, և Եբրայեցւոց բառ է։

Հ. Ինչ պատճառաւ կոչի Փրկիչ։

Պ. Այն պատճառաւ՝ որ նա զմարդկային ազգը փրկեց։

(*) Ղուկ. Դ. 18։

Հ. Յինչ՞ փրկեց։

Պ. Յ՚Աստուծոյ և յ՚ի ձեռաց սատանայի։

Հ. Ինչով՞ փրկեց։

Պ. Իւր չարչարանօք և մահուամբ։

Հ. Քրիստոս ո՞րքան ժամանակ մնաց յերկրի վերայ։

Պ. Երեսուն երեք տարի, կամ փոքր մի ևս աւելի։

Հ. Ի՞նչ գործեց այնքան ժամանակի մէջ։

Պ. Շատ հրաշքներ և բժշկութիւններ գործեց, և Ս. Եկեղեցեան Հանապարհը քարոզեց։

Հ. Յետոյ ի՞նչ եղև։

Պ. Համբարձաւ յերկինս, և նստաւ Հօր Աստուծոյ աջ կողմը։

Ե. Մէ՛ռոնգամ գալը՛ռ Քրիստոսէ։

Հ. Երկին անգամ գալոց է Քրիս-
տոս յաշխարհ։

Պ. Գալոց է։

Հ. Ինչպէս։

Պ. Լուր Աստուածային զօրութեամբ
և փառօք։

Հ. Վասն ինչ գալոց է։

Պ. Վասն դատելոյ զկենդանի և զմե-
ռեալ մարդիկսն։

Հ. Ընթ։

Պ. Յամենայն յայտնի է. վասն զի
Քրիստոս չկամեցաւ յայտնել։

103-99 (36151-66)

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ԱՄ. Ա. ՄԱՍՆԱՅԻՆ
Ա. ՄԱՍՆԱՅԻՆԻ ԱՆՎԱՆ

Շ. Ինչուն Հոգեւոյն աբէաց 'ի Յորդանան։

Հ. Հոգին սուրբ ճրագ իջաւ 'ի Յորդանան։

Պ. Ինչ ժամանակ Քրիստոս մկրտեցաւ 'ի Յովհաննէս Մկրտչէն։

Հ. Ինչպէս իջաւ։

Պ. Աղաւնւոյ կերպարանաւ։

Հ. Ինչու համար։

Պ. Քրիստոսի Աստուածութիւնը յայտնելոյ համար, և վկայելոյ՝ թէ նա է Ճշմարիտ Որդի Աստուծոյ։





Հ. Եկեղեցի Քրիստոսի, և խորհուրդք նորա։

Հ. «Եկեղեցի» որ աղգի բառ է, և զինչ նշանակէ։

Պ. Յունաց բառ է, և նշանակէ ժողով կամ ժողովուրդ։

Հ. Քրիստոսի ժողովուրդն որն է։

Պ. Ամենայն Աշխարհիս քրիստոնեայք։

Հ. Եկեղեցին Քրիստոսի քանի՞ նշան կամ յատկութիւն ունի։

Պ. Չորս, այսինքն՝ Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն, և Առաքելականութիւն։

Հ. Եկեղեցին ինչ պատճառաւ կոչի «Մի»։

Պ. Մ՛ին պատճառաւ՝ որ ամենայն քրիստոնեայք միով հաւատով

զմի Քրիստոս՝ զմի Աստուած պաշտեն։

Հ. Ինչ պատճառաւ կոչի «Սուրբ»։

Պ. Այն պատճառաւ՝ որ ամենայն քրիստոնեայք մկրտութեամբ սրբեալ են 'ի մեղաց, և Քրիստոնէական հաւատքն զսրբութիւն քարոզէ։

Հ. Ընկեղեցւոյն Քրիստոսի «Ընդհանրական» կոչելոյ պատճառն ինչ է։

Պ. Այն է՝ որ քրիստոնէութիւնն շատ ազգաց մէջ տարածեալ է, և մինչ 'ի կատարած աշխարհի մնալոց է։

Հ. «Առաքելական» կոչելոյ պատճառն ինչ է։

Պ. Այն է՝ որ Քրիստոնէական հաւատքն 'ի ձեռն Առաքելոց քարոզեցաւ, և Առաքելական բանից վերայ հաստատեալ է։

Հ. Եկեղեցին քանի՞ խորհուրդ ունի։
Պ. Յօթն՝

Ա. Մկրտութիւն։
Բ. Դրոշմ։
Գ. Սպասխարութիւն։
Դ. Հաղորդութիւն։
Ե. Մխիթարութիւն։
Զ. Կարգ կամ Քահանայութիւն։
Է. Օծումն հիւանդաց։

Հ. Յայդ խորհրդոցդ ոյք էկրկնին։
Պ. Մկրտութիւնն, Դրոշմն, և Կարգն։

*
* *

Հ. «Մկրտութիւն» ինչ ասել է, և ինչ նիւթով կատարի։
Պ. Լուացումն ասել է, և կատարի ջրով։
Հ. Ինչի՞ օրինակ է։

Պ. Քրիստոսի մահուան և թաղման։

Հ. Ի՞նչ օգուտ ունի։

Պ. Սրբե զերեխայն յայն մեղաց՝ որոյ մէջ ծնեալ է նա։

*
* *

Հ. Դրոշմ զի՞նչ նշանակէ։

Պ. Նշան կամ կնիք։

Հ. Արդեոյ յո՞ր տեղն դնեն զայդ նշանդ։

Պ. Ճակատի կամ այլ զգայարանաց վերայ։

Հ. Ինչ նիւթով կատարի։

Պ. Արեւոնով, որ է օրհնած ձէթ։

Հ. Դրոշմի օգուտն ի՞նչ է.

Պ. Ի՞օրացուցանէ զմկրտեալն ըզ Քրիստոնէական հաւատը պահելոյ, և Քրիստոսի անուանակից առնէ։

*
* *

Հ. «Ապաշխարութիւն» զի՞նչ նշանակէ։

Պ. Ապա աշխարել, այսինքն՝ յետոյ լալ։

Հ. Ապաշխարութիւնն ի՞նչպէս պարտի լինիլ։

Պ. Կատարեալ զղջմամբ։

Հ. Ինչո՞վ կատարի։

Պ. Աղօթիւք, պահօք, և վճարմամբ։

Հ. Օ՞ի՞նչ օգուտ ունի։

Պ. Սրբէ զմարդն յայն մեղաց՝ զոր գործեալ է յետ մկրտութեան։

* * *

Հ. «Հաղորդութիւն» բառի նշանակութիւնն ի՞նչ է։

Պ. Կցորդութիւն կամ մնանակցութիւն։

Հ. Ինչ պատճառաւ այդպէս կոչի։

Պ. Այն պատճառաւ՝ որ այնու ըզ Քրիստոսի մարմինը և արիւնը ճա-

շակելով՝ կցուրդիմք կամ մնանա-
կեց լինիմք նմա հոգւով։

Ի. Ինչ է Հաղորդութեան նիւթն։

Պ. Յորենոյ հաց, և խաղողոյ գինի։

*
* *

Ի. Ամուսնութեան խորհուրդն ո՞րն է։

Պ. Պսակիչն է։

Ի. Ինչի՞ օրինակ է։

Պ. Քրիստոսի՝ եկեղեցւոյ հետ ան-
բաժան միաւորութեան։

*
* *

Ի. Կարգն ի՞նչ է։

Պ. Այ՛ հոգևոր պաշտօն, որ Ձեռ-
նադրութիւն ևս կոչի։

Ի. Ինչ պատճառաւ կոչի «Ձեռ-
նադրութիւն։»

Պ. Այ՛ն պատճառաւ՝ որ ձեռք դնելով
կատարի։

Հ. Ո՞վ ունի իշխանութիւն ձեռնադրելոյ։

Պ. Եպիսկոպոսն։

Հ. Քանի՞ աստիճան ունի կարգն։

Պ. Եօթն՝

Ա. Դռնապանութիւն։
Բ. Դպրութիւն։
Գ. Երգմնեցուցչութիւն։
Դ. Ջահընկալութիւն։
Ե. Կիսասարկաւագութիւն։
Զ. Սարկաւագութիւն։
Է. Քահանայութիւն։

Հ. Եպիսկոպոսութիւնն ինչ է։

Պ. Այն գլխաւոր քահանայութիւն, ուստի կոչի և Քահանայապետութիւն։

Հ. Կաթուղիկոսութիւնն ինչ է։

Պ. Այն գլխաւոր Եպիսկոպոսութիւն,

ուստի կոչի և Եպիսկոպոսա-
պետութիւն։

Հ. Ա արդապետն ինչ աստիճանունի։

Պ. Քահանայութեան աստիճանունի.
բայց պարտաւոր է ևս Ուսուցիչ
լինել, այսինքն՝ քարոզել ժողո-
վրդեան զԱստուածային պատ-
գամքը։

*
* *

Հ. Հիւանդաց Օծումն որն է։

Պ. Ա՛յն օծումն է՝ որ հիւանդաց
համար սահմանեալ է։

Հ. Ինչո՞վ կատարի։

Պ. Աղօթիւք, և օծմամբ օրհնեալ
իւղոյ։

Հ. Ասանց օծման իւղոյ չէ՞ կարելի
զայդ խորհուրդդ կատարել։

Պ. Կարելի՛ է, որպէս կատարէ Հայոց
եկեղեցին՝ միայն քահանայից ա-
ղօթիւք։

Ը. Յարութիւն մեռելոց։

Հ. «Յարութիւն մեռելոց» ասելով՝ զինչ պարտ է իմանալ։

Պ. Պարտ է իմանալ՝ թէ մեռեալ մարդոց մարմինքն վերջին դատաստանի յօրն՝ իւրեանց հոգւոց հետ միաւորելով՝ յառնելոց են Աստուծոյ հրամանաւ։

Թ. Վերջին դատաստան։

Հ. Ո՞վ վերջին դատաստանը ունի առնելոց է։

Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Հ. Ինչպէս։

Պ. Ո՞ արդարները՝ ի մեղաւորաց բաժանելն յետոյ, ամենայն մարդոց

վարձ կամ պատիժ տալոց է՝ ըստ իւրեանց գործոց։

Հ. Ո՞ւր լինելոց են արդարքն, և ո՞ւր մեղաւորքն։

Պ. Արդարքն լինելոց են յերկնից արքայութեան, և մեղաւորքն 'ի դժոխս։

Հ. Արքայութիւնն ի՞նչ է։

Պ. Այնպիսի երանաւէտ վիճակ կամ կեանք մի է, զոր ո՛չ աչք է տեսած, ո՛չ ականջ է լսած, և ո՛չ լեզու կարէ պատմել։

Հ. Դժոխքն ի՞նչ է։

Պ. Այնպիսի չարաչար վիճակ մի է, որ լի՛ է ամենատեսակ տանջանօք և թշուառութեամբք։

ԳԼ. Բ

Յոյս։

Ն. Օ՜ինչ ինչ պարտիմք յուսալ Յ՚Աստուծոյ։

Պ. Պարտիմք յուսալ վայելելոյ զայն ամենայն բարիքը՝ զորս խոստացեալ է Յ՚Աստուած իւր սիրելեացն։

Ն. Որպիսի բարիք խոստացեալ է։

Պ. Խոստացեալ է կեանք, հանգիստ, և երանութիւն անվախճան։

ԳԼ. Գ.

ԱՍՔ։

Հ. Աստուծոյ սէրն զինչ պահանջէ՝ 'ի մարդոյ։

Պ. Պահանջէ զնորա օրէնքը կամ պատուիրանքը պահել։

Հ. Զինչ հրամայեն Աստուածային օրէնքն։

Պ. 'Ի չար գործոց հեռանալ, և գործել զբարի։

Հ. Օրէնքն քանի՞ տեսակ է։

Պ. Երկու տեսակ է, Բնական, և Դրական։

* * *

Հ. Բնական օրէնքն որն է։

Պ. Մարդոյ խղճմտանքն է։

Հ. Խղճմտանքն ինչո՞ւ համար կոչի օրէնք։

Պ. Այնո՛ր համար՝ որ այնու կարէ մարդ ճանաչել զբարին և զչարն։

Հ. Ինչո՞ւ համար կոչի Բնական։

Պ. Այնո՛ր համար՝ որ 'ի քնէ՝ այսինքն 'ի ծննդենէ տպաւորեալ է ամենայն մարդոյ սրտի մէջ։

Հ. Ունէ այլ օրէնքներ ծնան 'ի Բնական օրինաց։

Պ. Ամենայն քաղաքական և դատաստանական օրէնքներ։

Հ. Յորո՞ց հաստատեցան այն օրէնքներն։

Պ. Յօրինաւոր թագաւորաց և յԱշխանաց։

Հ. Պարտական եմք և այն օրինաց հնազանդիլ։

Պ. Այո՛, ինչպէս Աստուծոյ հրամանի։

* * *

Հ. Դրական օրէնքն որն է։
Պ. Այն է՝ զոր Աստուած գրով տուաւ։

Հ. Ինչ պատճառաւ կոչի «Դրական։»
Պ. Այն պատճառաւ՝ որ յետ Ինական օրինաց դրուեցաւ։

Հ. Ի քանիս բաժանի Դրական օրէնքն։
Պ. Յերկուս, այսինքն՝ ի Հին, և ի Նոր։

* * *

Հ. Հին օրէնքն որն է։
Պ. Այն է՝ զոր Աստուած Մովսէս մարգարէի ձեռամբ տուաւ։

Հ. Որ տեղ։
Պ. Ի Սինա լերին։

Հ. Երբ։
Պ. Իսրայէլացւոց Եգիպտոսէն ելանելէն յիսուն օր յետոյ։

Հ. Քանի՞ տեսակ էր Հին օրէնքն։

Պ. Երեք տեսակ էր, այսինքն՝ Բա-
րոյական, Ծիսական, և Պատաս-
տանական։

Հ. Այժմ խափանեալ են այդ օրէնք-
ներդ։

Պ. Ծիսական և Պատաստանական
օրէնքներն խափանեալ են քրիս-
տոնէից մէջ։

Հ. Բարոյականքն չեն խափանեալ։

Պ. Ա՛յ. վասն զի վերստին հաստա-
տեցան 'ի Քրիստոսէ։

*
* *

Հ. Ո՞յք են Բարոյական օրէնքն։

Պ. Աստուծոյ տասն Պատուիրանքն են։

Հ. Յինչի վերայ գրեալ էին տասն
Պատուիրանքն։

Պ. Յերկու քարեղէն տախտակաց
վերայ։

Հ. Ասա զտասն Պատուիրանքը։

Պ. Ա. «Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք՝ բաց յինէն։

Բ. Մի՛ արասցես կուռս։

Գ. Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո՝ ի վեր սյմնոտեաց։

Դ. Յիշեա՛ սրբել զօր շաբաթու։

Ե. Պատուեա՛ զհայր քո և զմայր։

Զ. Մի՛ սպանաներ։

Է. Մի՛ շնար։

Ը. Մի՛ գողանար։

Թ. Մի՛ սուտ վկայեր։

Ժ. Մի՛ ցանկանար տան ընկերի քո, և այլն։

Հ. Զինչ հրամայէ Աստուած «Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք՝ բաց յինէն» ասելով։

Պ. Հրամայէ՝ որ բաց ՝ի միոյն Աստուծոյ՝ այլ ոչ ունիցիս։

Հ. «Մի՛ արասցես կուռս» ասելով՝ զինչ հրամայէ Աստուած։

Պ. Հրամայէ՝ որ կուռք չշինեմք, կուռք չպաշտեմք։

Հ. Զինչ նշանակէ «Կուռք» բառդ։

Պ. Ի՝ քարէ՝ ի փայտէ՝ կամ յայլ նիւթոց շինեալ պատկեր։

Հ. «Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ի վերայ մնոտեաց» ինչ ասել է։

Պ. Աստուծոյ անուամբ ոչինչ բաների համար մի՛ երդուիր։

Հ. «Շաբաթ» որ ազգի բառ է, և զինչ նշանակէ։

Պ. Ընբրայեցւոց բառ է, և նշանակէ հանգիստ։

Հ. Քրիստոնեայք պարտաւորեն պահելոյ զշաբաթ օրը։

Պ. Ոչ. շաբաթի տեղ՝ պարտաւորեն պահելոյ զկիւրակէ օրը։

Հ. Որն է Կիւրակէ օրն։

Պ. Աշխարհի ստեղծման առաջին օրն է՝ վասն որոյ կոչի նաև Միաշաբաթ։

Հ. Ոյք սահմանեցին շաբաթի տեղ զկիւրակէն պահել։

Պ. Առաքեալք։

Հ. Ինչ։

Պ. Օրինի Քրիստոսի համբարձմանն։

Հ. Ինչու համար։

Պ. Այսոր համար՝ որ այն օրը յարեաւ Քրիստոս, և այն օրը իջաւ Հոգին սուրբ 'ի վերնատունն։

Հ. Հայոց բառ է Կիւրակէ։

Պ. Ոչ։ այլ՝ Յունաց բառ է։

Հ. Օրինչ թարգմանի։

Պ. Տէրունական։

Հ. Ինչպէս պարտ է սուրբ պահել զկիւրակէն։

Պ. 'Ի ծառայական գործոց ազատ

մնալով, և հոգեշահ գործոց պա-
րապելով։

Հ. Օտարական գործքն ոյք են։

Պ. Արմնաւոր շահուց համար ե-
ղեալ աշխատութիւնքն են։

Հ. Ոյք են հոգեշահ գործքն։

Պ. Այսոքիկ են. յեկեղեցի գնալ,
աղօթել, քարոզ լսել, հոգևոր
գիրք կամ Աւետարան կարդալ,
շարադրել, դաս սերտել, և այլն։

Հ. «Պատուեա՛ զհայր քո և զմայր»
ասելով՝ զի՞նչ հրամայէ Աստ-
ծ։

Պ. Պատուել զմեր հոգևոր և մար-
մնաւոր ծնողքներս։

Հ. Ոյք համարին մեզ հոգևոր
ծնողք։

Պ. Ուր քարեբարքն, եշխանքն,
վարժապետքն, քահանայքն, և
այլն։

Հ. Ինչպէս արժան է պատուել
զնոսա։

Պ. Կատարեալ սէր և հնազանդութիւն ցուցանելով նոցա, և զնոցա երախտիքը չմոռանալով։

Ն. Ա.ստուած զինչ հրամայէ «Մի՛ սպանաներ» ասելով։

Պ. Մեր կամք պատճառ չլինիլ՝ ո՛չ այլոց և ո՛չ մեր մահուան։

Ն. «Մի՛ շնար, մի՛ գողանար, մի՛ սուտ վկայեր» ասելով՝ զինչ հրամայէ Ա.ստուած։

Պ. Շա՛ն նման անամօթաբար մեղաց չհետևիլ, չգողանալ, սուտ բանի վկայ չլինիլ։

Ն. «Մի՛ ցանկանար տան ընկերի քո» ասելով՝ զինչ հրամայէ Ա.ծ։

Պ. Մեր ընկերաց ունեցածներին մեր նևին աչք չդնել, և չյափշտակել։

*
* *

Հ. Ո՞ր օրէնքն որն է։

Պ. Յ՝ Քրիստոսէ աւանդեալ և Մովսէսէն քարոզեալ և գրեալ պատուիրանքն են։

Հ. Ինչ հրամայեն Քրիստոսի պատուիրանքն։

Պ. Յ՝ մեղաց և ի մոլութեանց զգուշանալ, և առաքինութիւն գործել։

Հ. Մեղքն քանի տեսակ է։

Պ. Երկու. Ակղբնական, և Ներգործական։

* * *

Հ. Որն է Ակղբնական մեղքն։

Պ. Ադամային մեղքն է, որ է անհնազանդութիւն։

Հ. Ադամ ինչ բանի անհնազանդ եղև։

Պ. Ստուած պատուիրեալ էր նմա՝

որ բարւոյ և չարի գիտութեան ծառոյ պտղէն չուտէ • բայց նա չհնազանդելով՝ կերաւ։

Ի. Ինչ տեսակ ծառ էր այն։

Պ. Չէ յայտնի, որովհետև Աստուա՝ ծաշնչի մէջ յանուանէ գրած չէ։

* * *

Ի. Սերգործական մեղքն որն է։

Պ. Այն է՝ զոր մեք յետ մկրտութեան գործեմք։

Ի. Ի քանիս բաժանի։

Պ. Յերկուս • այսինքն՝ ի Սահուչափ, և ի Սերեալի։

Ի. Ոյք են Սահուչափքն։

Պ. Ծանր ծանր մեղքերն են։

Ի. Սերեալքն ոյք են։

Պ. Փոքր և թեթև մեղքերն են։

* * *

Ի. Գլխաւոր մոլութիւնքն քանի՞ են։

Պ. Յօթն՝

Ա. Հպարտութիւն.
Բ. Նախանձ։
Գ. Բարկութիւն։
Դ. Ծուլութիւն։
Ե. Ագահութիւն։
Զ. Որկրամոլութիւն։
Է. Բողջախոհութիւն։

Ի. Հպարտութեան դէմ զի՞նչ առաքինութիւն պարտ է գործել։

Պ. Խոնարհութիւն։

Ի. Նախանձու դէմ։

Պ. Նզբայրսիրութիւն։

Ի. Բարկութեան դէմ։

Պ. Հեզութիւն և Համբերութիւն։

Ի. Ծուլութեան դէմ։

Պ. Աշխուութիւն։

Ի. Ագահութեա՞ն դէմ։

Պ. Ողորմածութիւն։

Հ. Որկրամտութեան դէմ։

Պ. Խարեխաւնութիւն, այսինքն՝ ուտելոյ և խմելոյ չափաւորութիւն։

Հ. Խղճախոհութեան դէմ։

Պ. Ողջախոհութիւն կամ Յուժկալութիւն, զոր աղօթիւք պարտիմք ընդունել ՅԻ.ստուծոյ։

*
* *

Հ. Քանի՞ կերպ է Ա.ղօթքն։

Պ. Երկու. Հրապարական, և Ա.ռանձնական։

Հ. Որն է Հրապարականն։

Պ. Ա՛յն է՝ որ յեկեղեցւոյ մէջ՝ բազմութեամբ՝ այլոց հետ լինի։

Հ. Ա.ռանձնականն որն է։

Պ. Ա՛յն է՝ զոր մեք 'ի մէջ խցի մենակ կամ առանձին կատարեմք։

Հ. Աղօթից գլխաւորն որն է։

Պ. Տէրունական աղօթքն է, այսինքն՝ «Հայր մեր»։

Հ. Ինչ պատճառաւ «Տէրունական» կոչի այն աղօթքն։

Պ. Ա՛յն պատճառաւ՝ որ 'ի Տեառնէ մերմէ Քրիստոսէ աւանդեցաւ։

Հ. Քանի՞ մասանց կան այն աղօթից մէջ։

Պ. Եօթն. որ է այսպէս

Ա. Հայր մեր որ յերկինս ես՝ սուրբ եղիցի անուն քո։

Բ. Եկեսցէ արքայութիւն քո։

Գ. Եղիցին կամք քո՝ որպէս յերկինս, և՛ յերկրի։

Դ. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։

Ե. Թող մեզ զպարտիս մեր,

որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։

Ջ. Եւ մի՛ տանիր զմեզ ՝ի փորձութիւն։

Է. Այլ փրկեա՛ զմեզ ՝ի չարէն։

Զի քո՛ է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

ՅԱՒԵԼՈՒԱԾՔ·

Ս· Ներսէսի Շնորհալւոյ

Բառեւ չափու

Ի դեմաց Հայէրէան Տառեց։

Ա·

Այբն առաջին ըզքեզ, տը՛ղայ,
Զանազ յիմաստըն գերակայ·
Ընդորդութեանըն մերձակայ
Լինիս երիւք ստեղամբք նորա։

Աչքն անընկիզելն ասէ զԱստուած,
Ընդեղ բնութիւն՝ ոչ արարած.
Յերիս անձինսն բաժանած,
Ի մի բնութիւն միաւորած։

Ռ.

Ռենրն բնաւից ասէ անձաւ,
Հասման մրտաց գոլ անհրնար
Օ՝ Ամրդւոյ ծրնունդն անեղաբար,
Օ՝ Հոգւոյ բըղխումն անհատաբար։

Ռենրն բանից, ասէ, չարաց
Սանձեա՛ զլեզուդ վասն ընկերաց,
Ի բերանոյ քո հա՛ն ՝ի բաց
Օ՝ խօսս աղտեղիս նախատանաց։
Նաև ՝ի բան բամբասանաց՝
Դէ՛ր պահապան քոյոց շրրթանց

Օ՛չ ապրեսցիս դու 'ի մեղաց
Ա՛ յանաչառ դատաստանաց։

Գ.

Գիմին գանձէ քեզ բիւր բարի,
Գրելով զիմաստս 'ի տախտակի.
Օ՛նա արկ 'ի քոյդ պարանոցի,
Որ պատուական է քան զոսկի։

Գիմին գրրովք Աստուածային
Ուսուցանէ խրատել լեզուին.
Ամանք քո նոքօք յարդարեսցին,
Գործքդ նոցին հետևեսցին։
Ա՛յ մի՛ ընդդէմ կար հրամանին,
Այլ հնազանդեա՛ց պատուիրանին։
Ա՛յ ոտքք քո ո՛չ մոլորին
'Ի ճըշմարիտ ճանապարհին։

Դ.

Դայն դաւանե զԱՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ,
Արեք անձինք, և մի բնութիւն.
Ո՛չ միութեամբ 'ի խառնութիւն.
Ո՛չ բաժանմամբ յօտարութիւն։

Դայն դատողին երկնաւորի
Խրատե ըզքեզ սպասել յերկրի.
Այլ 'ի մարմնոյ քո վախճանի,
Հոգւոյդ կոչմանըն տերունի
Պնալով լինել յանկարծակի,
Ելման գողոյ 'ի գիշերի։

Ն.

Ան երգե միշտ յականջըս քոյ
Տալ ըզհամար պարտուցըն քոյ.

Որպէս մանկունք ուսման գերոյ,
Ըստ խտակին համար տալոյ.
Կամ որք վերից տընտեսք գործոյ,
Ա՛ռ 'ի զհամար պահանջելոյ։
Բանզի տընտես ես քո հոգւոյ,
Նա պարգևացն Աստուածայնոյ։

Ա.

Ա՛ռայն զուգակից սրմին ծանի՛ր,
Որ միշտ ասէ՝ թէ զօրացի՛ր.
'Ի խոր քընոյ մահու զարթի՛ր,
Նա 'ի յանձին քում զգաստացի՛ր։
Յանցաւորացըս մի՛ խաբիր,
Յանանց կենացըն մի՛ զբրկիր.
Ա՛ստղաբուլթիւն այժմ ըզգեցի՛ր,
Նա անդ փառաք պայծառացի՛ր։

Բ.

Բ՚ն էապէս մեզ քարոզէ
զՄ՚Ն՚Ն՚Ն, ուսեալ 'ի Աովսիսէ,

թէ Ա.ստուած էր 'ի սկզբանէ,
Եւ ոչ եղեալ 'ի յումեքէ։

Ը.

Ընթն ընդ Լին Հօր զուգական
Օ.Ողդի ասէ համաբնական.
'Ի Յովհաննէ ուսեալ զայս բան,
Որ որոտայ Մ.ետարան։

Ընթն ընկերի քո պատահել
Դարեաց երաց ինչ յաջողել,
Խրատէ զքեզ՝ մի' յաչաղել.
Մի' մնխանօք զքեզ այրել։
Ա.յլ թէ կամիս, ասէ, հանգչել,
Եւ Ա.ստուծոյ հաճոյ լինել,
Դու գոհութիւն տուողին յաւէ՛լ,
Ա.մմ՝ որ գիտէ հաւասարել։

Թ.

Թոյն թարգմանեմ մեզ տիրաբար
Օ Հոգւոյն բըղխումն անքննաբար,
Թէ 'ի Հօրէ է յատկաբար,
Առնու յՈրդւոյ անՀառաբար։

Թոյն թագ, ասէ, արքունական
Կամ պետութիւն Եշխանական
Թէ ընկալցիս դու ըզմարդկան,
Մի՛ համարիր քեզ սեպհական։
Այլ ըստ հարանց քոց, որ անցան,
Ծանի՛ր ըզքեզ ծաղկի նըման.
Այս մի՛ լինիր ամբարտաւան,
Այլ քաղցր և հեզ խոնարհական։

Յ.

Յ.ԷՆ ԺՈՒԺԿԱԼԵԸ, ասէ, յուսումն
Թէ և ապտակ առնուս յարբումն,
Հայեաց յոսկին՝ որ 'ի քրայումն,
Օ՚ի ծեծելով առնու զմաքրումն։

Ի.

ԻՆՆ իսկապէս, ասէ, բանին
'Ի յոչընչէ ստեղծեալ զերկին.
Հաղորդ ընդ Հօր է և Հոգին,
Որով եղեալքս ամէն լինին։

Լ.

Լ.ԻՒՆ լուր, ասէ, հօր քո խրատու.
Լ՚էր օրինաց մեր քո հրատու։
Մարդապետին հնազանդ կաց դու,
Յորմէ շահիս բան խրատու։

Լիւն լըսել, վարդապետ,
'Ի ցաւագին բարկութենէն,
Եւ յանհանգիստ սըրտութենէ
Հանգչել, ասէ, 'ի չար ախտէն։
Ընկալ ըզսոյն և 'ի Տեառնէն,
Յերանութեանց հեզոց բանէն.
Ոչ՝ թէ մերձ է որ դատէն,
Հատուցանել քեզ փոխարէն։

Խ.

Խէն խըրատ ընդ սուրբ գըրոց
Խաղալ, և մի 'նդ՝ անմիտ աղայոց.
Եւ ընդ բանից մեծ իմաստնոց,
Փոխան վիժմանցն ըզչար յիշոց։

Ծ.

Ծայն ծովու պէս, ասէ, զիմաստ,
Որ 'ի յերկնից իջեալ է աստ.

Ռա՛ց ըզհոգւոյ քո զառագաստ,
Ծրծել մրտաքրդ լեր պատրաստ։

Կ.

Կենալն կենաց զանցաւորէ
Կըրկին դըրամէք քաղաք ասէ.
Ընդ մին մտեր մերկ յարգանդէ,
Ընդ միւսն ելցես մերկ յաշխարհէ։
Ադրդ զինչ օգտիս դու 'ի շահէ
Ի՛ քաղաքիս այս վաճառէ,
Յորժամ 'ի դրունսըն կողոպտէ
Ահն, որ կենաց թըշնամին է։

Հ.

Հոյն հայեա՛ց յոյժ, ասէ, բանիս,
Եւ մի՛ զբաղեր միշտ 'ի մնոտիս.
Ա՛ի յապաղեր դու 'ի չարիս,
Այլ փոփոխեա՛ փոյթ 'ի բարիս։

Օ՛ի յորժամ ո՛չ գիտես, կոչիս
Ու ըստ գործոց քոց պահանջիս.
Ու թէ չունիս պատասխանիս,
Յանլոյս խաւար քանդ արկանիս։

Զ.

Զայն ձա՛յն տայ քեզ, մնո՛ւկ ուշիմ,
Թէ ականջք լսուր ըզբանս իմ.
Ուսման գրոց լե՛ր մնտերիմ,
Ու բարձրանաս դու 'ի յերկին։

Ղ.

Ղատն ղեկ առնուլ քեզէն ճարտար
Նաւել յայս ծով տայ հրմնաբար.
Ասէ, յուզել ալեացն յերկար՝
Ընդդէմ կացցես հրզօրաբար։
Մարեա՛ զհոգւոյդ նաւ անդադար,
Հոգւոյն Թեւովք առ 'ի հանճար.

Օ՜ի հասուցես անդորրաբար
Յանքոյթ տեղին խաղաղարար։

Ա՛.

Ա՛էն ճանաչել տայ ըղհանճար,
Ըստ Ս.ռակաց բանին յարմար.
Ընով խրատիս լինել արդար,
Նու Ս.տուծոյ հաճոյարար։

Ա՛էն ճառագայթ առ 'ի սըրտեդ,
Ս.սէ, ծագեա՛ լուսոյ հանդէտ.
Օ՜քանըս բարիս հե՛ղ 'ի լեզուէդ,
Օ՜ողորմութիւն 'ի ձեռանէդ։
Ինայց Ս.րարչէն քեզ պարգևէդ
Մի՛ վատթարաց վատներ յանպէտ.
Թէ ո՛չ, վըճար տաս 'ի յանձնէդ,
Յորժամ խընդրէ 'ի յաւուրէդ։

Մ.

Մենքն մերժեա՛, ասէ, 'ի քէն
Զ՝ախտըս մեղաց՝ որ 'ի չարէն։

Յ.

Յին յիշել տայ զմանկունս երիս
Զ՝աշակերտեալս Դանիէլիս,
Թէ՝ սոցա՛ պէս, ասէ, մաքրիս,
'Ի հրոյ մեղաց բընաւ չայրիս։

Ն.

Նունայեա՛ց տես, ասէ, զՅովսէփ
Զ՝հրեշտակաց նըմանն 'ի դէպ.
Պահեա՛ և դու զքեզ անվըրէպ,
Եգիպտուհւոյն ախտից անդէպ։

Շ.

Շայն շընորհաց, ասէ, սիրող,
Լէր իմաստնոցըն հետևող.
Ոչք առ իմաստըն փափագող,
Մինչև 'ի մահ եղէն ճըգնող։

Շայն շատ, ասէ, ով ծերունիդ
Հնացեալ ալեօք, կալ յաշխարհդդ.
Յամ է դառնալ այժմ 'ի հոգիդ,
Մինչ դեռ 'ի ձեռս է քեզ բարիդ։

Ո.

Ոյն ուսուսցէ քեզ դիւրութեամբ՝
Նա աստ և անդ լի բարութեամբ,
Սիրել զ'ստուած ճշմարտութեամբ.
Նա զքո ընկերն ըստուգութեամբ։

Մերժել զչարն ատելութեամբ,
Գերկել զբարին սիրելութեամբ.
Պահել զհոգի քո սրբութեամբ
Յաւ անհրպարտ խոնարհութեամբ։

Զ.

Զայն չար ասէ զաղտնութիւն,
Օրի շատ մեղաց է ծնելութիւն.
Օրի 'ի նմանէ է սպանութիւն.
Կա՛ է աւար և գերութիւն.
Ընտի սկըսեալ է գողութիւն,
Յաւ անիրաւ դատողութիւն.
'Ի յայնմանէ վաշխառութիւն
Յաւ ըզմիմեանս ատելութիւն։

Պ.

Պէն պատուիրէ պարկեշտ լինել,
Մի՛ զորովայնըդ խըճողել,

Մի ըզգինի բընաւ սիրել,
Մի տարաժամ զբերանդ յածել։

Պէն պատուիրէ կալ անբամբաս
'Ի յայս չարեաց, յորում թէ կաս.
Օ՞ի մի հոգւոյդ առնես վրնաս՝
'Ի՞ ձախակողմն կալով դաս։
Նաւ մի նախատ 'ի կեանքս յայս,
Յորում զարժանն ումեք ո՛չ տաս։
Տո՛ւր զանցաւորդ՝ զոր ըստանաս,
Նաւ ո՛ւռ զանանցն՝ յոր գընաս։

Դ.

Դ՞էն ջանիւ հա՛ս, ասէ, հնորհաց,
Մի ծոյլ կենար և դեգերած.
Մի սիրեր զքուն դանդաղանաց,
Մի արթնութիւն ըզբաղանաց։

Ո·

Որայն ուահիւ զքեզ 'ի բարձունս
Հանէ հոգւոյ ընդ իմաստունս·
Թէ զանձրն քո տաս 'ի ծրգունս,
Ելցես յիմաստս գերաբունս։

Որայն ըւամիկ արանց հանուրց
Ո՛չ նախանձել, խրատէ, վարուց·
Եւ գինարբուաց երգոց պարուց
Մի՛ հաղորդել լրկտի բարուց։
Օ 'ի փոխանակ աստէն ծաղուց,
Ցոծումն և լաց է անդ նոցունց
Ընդ մեծատանն այնմիկ դասուց,
Որ փափաքէր կաթիլ մի ջուրց։

Ս·

Սէն սիրող լեր, ասէ, ուսման·
Յաւէլ 'ի քեզ զփոյթ և ըղձան,

Այլ և զխորհուրդս մաքրական,
Որով հոգիքն զօրանան։

Ա.

Ա՜ եւն վարք, ասէ, պիղծ անառակ
Տեառնն կամացն է հակառակ.
Նա որ 'ի յայս սէր է համակ,
Ի Աստուծոյ սիրոյն դիմակ։
Արդ մի՛ ըմբէր խիստ ախորժակ
Անցաւորիս սիրոյ քաժակ.
Այլ փոփոխեա զմիրրատեսակ
Յանապական սէրն յԸստակ։

Տ.

Տիւն տայ ասել բան ծայրագոյն
Ասըն Դանիէլ իմաստալոյն,
Տեառնն փառաց խոնարհելոյն,
Մինչև խաչի համբերելոյն։

Տիւնքն տէրանց և իշխանաց
Խրատ ընծայէ իմաստութեանց՝
Թէ մի՛ սիրէք ժողովել դանձ,
Այլ ըզժողով բարի արանց։
Ըզմտերիմն տերութեանց
Եւ զհետևողսն քաջութեանց,
Որք վասն մեր 'ի մահ անձանց
Կամաւ դիմեն որպէս 'ի դանձ։

Ր.

Ոչն տաւ չէ բանի սկըսուած,
Այլ ակամայ բըռնաղբօսած.
Բայց դու զականջդ առ ընթերցուած,
Թէ զինչ խօսի՝ ըզմտաւ ած։
Սիրեա՛ բոլոր սըրտիւ զՄ.ստուած.
Եւ օրինաց նորա խնամ ած.
Օ՜հոգիդ պահեա՛ յախտից մաքրած,
Եւ 'ի մեղաց միշտ լըւացած։

8.

Յոյն ցընծութիւն մեզ քարոզէ
Օ՞միշտ կենդանւոյն յարութենէ,
Ինչ զյարութիւն մեր հաստատէ
Նըմին նըման՝ յորժամ գայցէ։

Յոյն ցուցանէ միւս բան խըրատ,
Որ 'ի չարեաց առնէ ազատ.
Մի՛ նախանձիր բընաւ ընդ մարդ.
Ինչ մի՛ նենգեր զընկեր քո գաղտ։
Օ՞ի Աստուծոյ ծածկեալն է յայտ,
Ինչ հատուսցէ փոխան քեզ դատ,
Կամ 'ի յաստի կեանքս անընդհատ,
Կամ 'ի վերջին օրըն հաստատ։

Ի·

Իւնն յօդական միայն է տաւ,
Բայց զոր յօդէ՝ քեզ խրբատ առ·
Յորժամ մեղաց դառըն պատառ
Դեզ երևի քաղցր և դիւրաւ,
Նախ քան զուտել նորա 'ի սպառ՝
Յիշեա զամենեն և ըզպատկառ·
Եւ շիջանի բոցն որ 'ի վառ,
Եւ զգօնանայ միտքդ յամառ։

Փ·

Փիւրըն փառաց է քեզ քարող,
Այս խրատական բանից տալոյս·
Ուր թէ սրբոտիւ լինիս 'ի յոյզ
Եւ տաս աչեալ իբրև ըզբոյս,
Օ՜հոգիդ մնքուր պահէ և լոյս
'Ի յաշխարհիս խաւարելոյս·
Եւ հանդերձեալ կենաց տայ յոյս,
Պըսակ առնուլ քեզ ընդ հաճոյս։

Վ.

Վ.էն Վ.ըիստոսի՝ ձեռվն իւրով
Օ.մեզ յորդորե խաչակցելով,
Ն.ի և փառաց հորա յուսով
Յաղորդ լիցուք մնքրեալ հոգւով։



ԱՂՕԹՔ

Այսն թռչունքի։

Տէր Աստուած մեր, կեցո՛ զամենաբարեպաշտ թագաւորն և զՔՍ Կայսրն ամենայն Ռուսաց ՀԵՆՐԻԿՍԻ ԳԱՅ ՓԱՌՈՒՈՒՉՆ, զօրացո՛ զնա, օգնեա՛ զաւակաց և զօրաց նորա՝ պահելով զամենեսին 'ի խաղաղութեան։

Աղօ.

թագաւոր յուսացաւ 'ի Տէր. յողորմութենէ Բարձրելոյն նա մի՛ սասանեսցի. ամէն։

Պատշաճ դատեցաւ կարգել աս-
տանօր զցուցակ համբրէն Այսերա-
զարմիցն Իշխանաց և Իշխանուհեաց՝
յանուանէ. որպէս զի աշակերտք Ա-
զարեանցս Ն՚եմարանի՝ որք վայելեն
լիով 'ի խնամն Այսերական հովա-
նաւորութեան, դիտասցեն աղօթող
լինել առ Ա՚ստուած վասն ամենե-
ցուն նոցա՝ ըստ Ա՚ռաքելոյն բանի
(ա Տիմ. Բ. 1—4)։

ՅՈՒՅՑԿ

Կայսերական Աղգատոհմի։

—

Ամենաբարեպաշտ Հնքնակալ Մեծ Թագաւորը և Կայսր ամենայն Ռուսաց՝ ՆԻԿՈԼԱՅ ԱՅ ՓԱՎԼՈՎԻՉ. և ամուսին նորա Ամենաբարեպաշտ Թագուհի և Կայսերուհի Աղեքսանդրա Ֆեոդորովնա։

Ժառանգն Կայսեր ամենայն Ռուսաց՝ Բարեպաշտ Թագաւոր՝ Կայսերազն և Մեծ Իշխան Աղեքսանդր Նիկոլայեվիչ. և ամուսին նորա Բ. Թագուհի և Մ. Իշխանուհի Մարիա Աղեքսանդրովնա։

Ռ. Թագաւորք և Ս. Իշխանք՝ Նիկոլայ, Ալեքսանդր, Վլատիմիր, և Ալեքսէյ Ալեքսանդրեվիչք։

Ռ. Թագաւոր և Ս. Իշխան՝ Կոստանդին Նիկոլայեվիչ. և ամուսին նորա Ալեքսանդրա Յովսեփովնա։

Ռ. Թագաւորք և Ս. Իշխանք՝ Նիկոլայ և Միխայէլ Նիկոլայեվիչք։

Ռ. Թագաւոր և Ս. Իշխան՝ Նիկոլայ Կոստանդինիչ։

Ռ. Թագուհի և Ս. Դշխոյ՝ Ելենէ Փաւլովնա։

Ռ. Թագուհի և Ս. Դշխոյ՝ Մարիա Նիկոլայեվնա, և ամուսին նորա։

Ռ. Թագուհի և Ս. Դշխոյ՝ Օլգայ Նիկոլայեվնա. և ամուսին նորա։

Ր. Թագուհի և Մ. Դշխոյ՝
Եկատերինե Միխայելովնա։

Ր. Թագուհի և Մ. Դշխոյ՝
Մարիա Փաւլովնա. և ամուսին նորա։

Ր. Թագուհի և Մ. Դշխոյ՝ արքայուհի Ալեքսանդրոյ Անն Փաւլովնա. և ամուսին նորա։

ՄԱՂԹԱՆՔ

Յաւուրս տան պատարագաց։

—

Մեշտ Էդ ինքնաբուն, ինքնազօր Աստուած,
Դու Տէր՝ Տընօրէն՝ Հայր հանուրց ազանց.
Կաթեա կաթիլ մի յանդ մերոց մընաց
Դ՝ քոց յանըսպառ յերկնաձիր շնորհաց։
Որով զարգացեալ ՝ի հրահանգս ուսմանց,
Սատուսցուք քեզ, Տէր, պաշտօն գեանամած։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Յէպ պոռոռուլէան։

—

Փառք քեզ, Բարձրելոյ Աստուած երկնաւոր,
Քո՛ մեր հրճուին միտք, քո՛ մեր սիրտք բոլոր։
Դու միայն Հաստիչ մշտընջենաւոր։
Ձեզ մեր այլ Աստուած, դու միայն հրաշք։
Ընչքեզ ո՞ ետես... այլ մեք ճանաչեմք,
Օրհնի՛ քէն եղեաք, քո՛ կեամք, քո՛ շընչեմք։

Ամանց Ամարջիդ խնամոց ոչինչ եմք։

Պահեա զմեզ, Տէր, զսոյն ա՝ ղաչեմք։

Մեծ ես դու, Տէր, մեծ են քո փառք, Աստուած հրեշտակաց։

Օրհնեալ գովեալ յերկինս 'ի վեր՝ յերկիր 'ի ստոր։

Սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ Տէր, հրաշաձայնեալ յերգ հոգևոր,

Այլ ոչ ակդ յեկեց օրհնիս հանապազօր։

Ոչինչ եմք մեք, ոչինչ զօրեմք քո առաջի

Կալ, և օրհներգ ձայնիցդ յոդել ըստ պատշաճի։

Լիւթականիս տըխեղծ յարկաւ
ծանրիմք յերկրի,

Թէ ո՛չ կացցէ մեզ զօրավիգ քո
հովանի։

Համեալքս աստէն վերուղերձեմք
արդ անմռուաց.

Դեզ փառք, պատիւ, և գոհու-
թիւն բազկատարած։

Ամենակալ ամենազօր Հաստիչ
Աստուած,

Մեք ապիկարք քոյոյ ձեռին եմք
ըստեղծուած։

Յայտնի՛ ուսաք, զի քա՛ շարժիմք,
քա՛ եմք, քա՛ կեամք.

Ի՝ քէ՛ն ունիմք զոր ինչ ունիմք.
առ քե՛զ կարդամք։

Ի՝ մեր վերայ եղիցի միշտ քաղցր
քո խնամք,

Ելեալ 'ի շնորհս, առնեալ ընդ որ հաճի քո կամք։

Տէս Տէր գերթա, կեցո զամեր Վեհ Բարերարս։

Ամրձ տուր նոցա աստ և յերկնից յանձառ 'ի փառս։

ԱՄԷՆ։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ԱՍՄԱՏՈՒՐԻՆ Ի ԱՆՎԱՆ
им. А. Мясниняна

Арм. 1 304
500 N
С арм-и / 5946